



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 40

ՇԱՐԱՐ

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին ակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒԾԻՆԵԱՆ

(كتيبة جہان) مطبعہ سی — باب عالی جادہ سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Այի Հասսէսի քիւ 23



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՅ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ անդային մասերն եզան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոյիս նոր բերուած այս անդուգական կազդուրիչ գեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. չերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան ուժասլաութիւն, դաշտութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղաջին սկարութիւն, նիւարութիւն, կուրծքի սկարութիւն, անարիւնութիւն ևն:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իւր անդուգական յատկութիւնը: Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԻՍԻՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոյններու քով:

30-10



ՏԱՐԵԴԱՐԶ ԾՆՆԴԵԱՆ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՄԵԾԱԶՕՐ ԻՆՔՆԱԿԱԼ

ՅԱԼԹԱՊԱՆԾ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆ ԹՈՒՐԲԻՈՅ



Օ՛ր երկնայի՛ն, օ՛ր քարեծնունդ՝ Թուրքիոյ Մեծ Պետութեան քոյր
զաւակներուն եւ հպասակներուն համար :

Աստուածական վսեմ շնորհն էր, Արարիչին վեհափայլ քարիքն էր
այն՝ երբ անհուն ցնծութիւններուն եւ անսահման վապօրէնուն մէջ ծնաւ
Վեհազօր Արքան՝

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ

Ու այսօր, անկերչ ու անհասնում երջանկութիւնով մը առջցուն ,
երախսագէտ սիրտի անմեկնելի խրախճանութեամբ զեղուն Իր հպասակ-
ները, անգամ մըն աչ առիքը կ'ունենան իրենց հաւասարիմ եւ ջերմա-
գին զգացումներն արსայայտել :

Հանրագիտակ՝ հաւասարիմ եւ երախսագէտ արտով ինձ՝ աչ կը մաս-
նակցի միջիտնաւոր հպասակներու արսաքողիս մաղբանքին գոյելով՝

ԿԵՅԵՔ՝, ՅԱՐԻԲՈՒ ԿԵՅԵՔ՝

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ

ՄԵԾԱԶՕՐ ԻՆՔՆԱԿԱԼ

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԵԾԱԶՕՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

Մեր յարգելի աշխատակիցը Վահրամ Մոմճեան մեզ զրկած է տխուր թըղ-
թակցութիւն մը, որուն մէջ իր գունաղեղ ոճով ու սահուն գրչովը կը պատ-
կերացնէ գաւառացի երիտասարդի մը անձնապանութեան պարագաները : Իր
վաղամեռիկ բարեկամին յիշատակին նուիրուած այս նամակը նիւթ կուտայ մեզի
լայնօրէն մտածել ընտանեկան և մեր բարձրուն տակաւ այլափոխուող քմահա-
ճոյքները քրքրել պահ մը և տանց անհրաժեշտ դարմանին վրայ լըծօրէն խոր-
հիւ ու խորհրդածել :

Նիւթը, չափահաս երիտասարդի մը հաւնած աղջկան հետ ամուսնութեան
կոպի մը արգելքն է ծնողացը կողմէն :

Պէտք է խոստովանինք թէ՛ մեր ծնողք, շատ հեռու են բարեացակամ և
համերաշխ գաղափարներով ամուսնացնել իրենց մանչ զաւակները : Դիտուած է
որ միշտ արգելքներ, դժկամակութիւններ, խոչնդոսներ կը յարուցուն երի-
տասարդաց առջև, երբ անոնք ամուսնանալու փափաքին յայտնեն իրեց ծնո-
ղաց : Այս վերջինները կ'ուզեն, իրենց հաւնած, իրենց մտադրած և վերջապէս
իրենց գաղափարականին համեմատ վճիռ տալ այդ մասին, բան մը որ 20 %
բացառութեամբ միշտ աննպաստ ու տխուր արդիւնք մը կուտայ : Ասիկայ տա-
րիներու փորձառութիւնը կրնայ ոտուգել :

Ամուսնութիւնը, անհատական և խնկական խնդիր մը ըլլալով հանդերձ,
յաւալի է ըսել որ ծնողք՝ իրենց անտեղի միջամտութեամբ վեր ի վայր կը շըր-
ջեն այն անուշ բոյնը զոր հիւսելու փափաքը կը տածեն ամուրի զոյգերը :

Արտառոց գաղափար մը պիտի ըլլար անշուշտ ծանրանալ և ըսել թէ՛ եր-
բք և երբք ծնողք մատ և մաս ունենալու չեն իրենց զաւակին ամուսնական
ընտրութեան մէջ, քաւ լիցի, բայց մեր ծեծած խնդիրը, մեր յենակէտը այդ
չէ : Անձնիւր դիտակցութեան և հօր ու մօր սէրն ու յարգը ճանչցող մանչ զա-
ւակ մը պարտի անսալ անոնց խրատին և յարգել զիրենք որչափ կարելի է,
բայց խնդիր է զիտնալ թէ՛ ո՞ր և է պակասութիւն չունեցող և պարկեշտ ընտա-
նիքի սերունդէ աղջկան մը գէժ յարուցուած ծնողական արգելքին պէ՞տք է
տեղի տալ : Ահա մեր լուսաբանել ուզած խնդիրը :

Ընդհանրապէս մեր մէջ սովորութիւն է աղջիկը ցուցնել փեսացուն մօրը և
պարագաներուն, անոնց ալ կարծիքը առնելու համար : Եւ ահա հստկէ է որ
կ'սկսի խնդիրը : Տղուն հաւնածին մայրը չի հաւնիր, կամ թէ մօրը ճաշակին
չի գար օրիսրդին դիմագիծը, և կամ ընտանեկան ինչ ինչ չնչին տարբերու-
թիւններ յոնքերը վեր կը քաշեն տիկին մօր, և ի վերջոյ պաշտօնական ԶԸԼԼԱՐը
իրը վճռական պատասխան կը հրամայուի տղուն :

Արդ՝ տղան որ խենդի պէս կը սիրէ այդ աղջիկը, և անոր հետ ամուսնա-
նալով՝ համոզուած է երջանկութեան բոյնը չինել և ապրիլ հանգստութեան,
կատարելութեան մէջ, ի՞նչ պէտք է խորհի իր ծնողաց այս անտեղի առարկու-
թեան և արգելքին հանդէպ : Շատեր այս տեսակ պարագաներու մէջ, բնու-


թեան ու ծնողական սէրը մէկդի ձգելով, կը հրաժարին հայրական տունէն և կերթան իրենց մտադրութիւնը իրագործել անշատ ապրելով ամուսնութենէն վերջ, և սակայն շատ քիչեր ալ չի կրնալով յաղթել ծնողական սէրը իրենց մէջ և նոյն ատեն տկար զգալով ինքզինքնին իրենց իտէալ օրիորդին ժխտական և վերջնական պատասխան մը տալ . . . անձնասպանութեան կը դիմեն : Ահա էն տխուր և առամաթիք պարագան որ թէև շատ քիչ կը պատահի մեր մէջ, սակայն պէտք է ըսել որ պատճառը ծնողական անտեղի դիտողութիւններն ու արգելքներն են :

Կատարեալ երիտասարդ մը, պէտք է իր սրտին սիրած և մտքով ալ համոզուած օրիորդին հետ կապուի, ինք որչէ իր ընկերուհին, համոզուած ըլլալով սակայն որ նոյն այդ ընկերուհին պիտի կրնայ կանգնել տունը, կազմել ընտանիքը և տեղի չտալ արտաքին դիտողութեանց և բամբասանքներու :

Ծնողական դիտողութիւնները և արգելքները աստիճան մը կ'արգարանան, եթէ տղան ծուռ ճամբայ մը ընտրէ, և կամ կոյր զկուրայն ընտրութիւն ընելու սխալ մը գործէ, այն ատեն արդար է կեցնել զայն և արթնցնել իր թրմրած վիճակէն, կռահել տալով իրեն սոսկալի վիհը, որուն եզերքը կը թեքերի ան աչքագոյ :

Ահա ծնողական պարտականութիւնը, ահա արդար և իրաւացի զաւակտէրութիւնը, որուն մէջ պէտք չէ թերանայ ծնողք մը, իսկ ասոնցմէ դուրս լոկ ցափռտուք քմահաճոյքներու, ըսի ըսաւներու և երրորդական առարկութիւններու համար անարդար և մահացու մեղք է պատուար կենալ ազնիւ և Աստուածահաճոյ գործի մը առջև, որուն հետեւանքը կըլլայ շատ անգամ զաւկի կորուստը . . . անձնասպանութիւնը :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԼԱՐՍԱՆՆԵՐ

ՀԱՅ—ԼԱՅՖԻ ՄԷՁ

Նիկուսաքի Բերա Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ՝ նմանը շատ քիչ անգամ տեսնուած շնորհ եւ պատգամութեամբ կատարուեցաւ Պապականութեան հանդէսը՝

ԱՁՆ. ՕՐ. ՎԱՐԴԱՆՈՒՇ ԹՕՓԱԼԵԱՆԻ

ԸՆԴ

ԱՁՆ. ԼԵՒՈՆ ԷԹԷՆՏԻ ԵՍՍՅԵԱՆԻ

Կնքանայութեամբ Ազն. Մկրտիչ Էթենի Եսայեանի :

Պապականութեան խորհրդոյն կը նախագահէին Տ. Տ. Դիմաֆեան եւ Երեցեան Սրբազանները : Եկեղեցին լեցուն էր Եսայեան եւ Թփալեան գերդաստանին բոլոր պարագաներովը ինչպէս նաեւ բարեկամներու եւ ծանօթներու հասընթիւ բազմութեամբ մը :

Եկեղեցական արարողութիւններէն վերջ նորապսակ ամուր առաջնորդուեցաւ յարաւից Թօգարեանի սալօնը, ուր ներկայ իրենց ճնորհաւորութիւնները մատուցին երկու կողմի ազգականներուն :

Տէր եւ Տիկին Լեւոն Էթենի Եսայեան նոյն իրիկունն իսկ Եւրոպական հեպընթացով մեկնեցան Բարիդ :

Խմբագրութիւնս այս բարեբաստիկ առթիւ կը փութայ իր ջերմ ճնորհաւորութիւնները յայննել քե նորապսակ ամուրի եւ քե Եսայեան, Թփալեան բարեհամբաւ գերդաստանին պարագաներուն :

ՄԻՄՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Թօլայեան — զոր պէտք է չփոթել ան-
շուշտ այս տողերս գրող Թօլայեանին հետ
օր մը soirée dansante ի մը կը հրաւիրուի :

— Ներեցէ՛ք, տիկին, կ'ըսէ անձանթ
կնկան մը, կը թողատրէ՞ք որ յաջորդ վա-
սը ձեր օրիորդ սղջկան հետ դառնամ :

— Ձեզ ճանչնալու պատիւը չունիմ, սի-
րելի՛ պարոն, կ'առարկէ աղջկան մօման :

— Եթէ ձեր աղջիկը ինծի էք վստահիր,
կրնամ... ֆռաքս իրր աւանդ ձգիլ ձեր
քով :

X

ՏիկինԸ (լալով) . — Այսօր կարգուելինս
ճիշդ մէկ տարի եղաւ և արդէն իսկ սկսար
զիս խաբել : Եւ սակայն... յախտնական
հաւատարմութիւն մը ուխտած էիր ինծի :

X

— Թօլայեան, շատ դժբաղդ եմ ըստ
անցեալ օր մարդուն մէկը ինծի :

— Կարգուէ՛, պատասխանեցի :

— Կարգուած եմ :

— Ուրեմն ամուսնալուծուէ՛ :

— Եեռ երէկ այդ բանը ըրի :

— Անանկ է նէ ձգած կնիկդ նորէն ա՛ռ :

X

Այսօր, Բերայի մէջ, ինծի ներկայացու-
ցին համակրելի պարոն մը, որ աշխարհիս
ամենէն զօրաւոր դօնսօլիտճին է եղբւր, թէև
մինչեւ այսօր տակաւին... Սակարանի
դռնէն ներս է մտած :

Տեսէ՛ք իր trucը :

Այս Բերացի պարոնը առտուն արթնցա-
ծին պէս կը պոռայ :

— Զարո՛ւկ լրագիրներս բե՛ր :

Ու, ամէնէն առաջ, Սակարանի բաժի-
նը աչքէ անցընելով՝ հաղա՛ր հատ գօնսօլիտ
կը գնէ սա՛չափէն, սակայն... մի՛շտ իր
անկողնին մէջ ու մի՛շտ ինքնիրենը :

Մինչեւ իրիկուն, ամենէն խոշոր խաղա-
ցողի յատուկ տնակի տագնապները կ'ան-
ցընէ :

— Արդեօք պիտի չահի՞մ, արդեօք չպի-
տի՞ չահիմ... :

Իրիկուն, հեւ ի հեւ և ներսիդին սըր-
տադողի մէջ, շունչ կ'առնէ Թօլայեանը :

Առաջին գործը կ'ըլլայ անշուշտ... սա-
կարանին փակման գիները աչքէ անցընել :

Ու ինքնիրենը կը մոլտայ ցաւագին շեշ-
տով մը :

— Վա՛յ շուշանորդի, սաչափ ոսկի կոր-
անցուցինք :

Ու, նոյն իրիկունը ո՛չ մէկու հետ կը
խօսի և ցաւը մոռնալու համար անկողին
կը մտնէ ու մինչեւ լոյս իր խոշոր կորուս-
տին վրայ մտածելէն չկրնար քնանալ :

Երբեմն ալ, սակարանին վերջին գիները
աչքէ անցընելով՝ կը բայադանչէ անձուն
ուրախութեամբ մը :

— Օ՛հ, այսօր սա՛չափ ոսկի չահեցայ :

Ու, որովհետեւ յարաբերական բնաւո-
րութիւն մը ունի, կ'երթայ ուրախութեա-
նը մասնակից ընել իր բարեկամները, որոնք
զինք կ'անուանեն հեգնաբար . — Պղատո-
նական գօնսօլիտճին :

Ամէն օր չմոռնար իր սակարանի չահերը
և կորուստները նշանակել մասնաւոր տեռ-
րակի մը մէջ, և ամուս գլխուն պլլանչօ
մըն ալ կը պատրաստէ :

Աւելորդ է ըսել թէ այս մարդը, կեան-
քին մէջ, երբեք Սակարանը տասը փարա
իսկ չէ կորսնցուցած :

Նոյնպէս, աւելորդ է յայտնել թէ՛ այս
մարդը, կեանքին մէջ, Սակարանէն տասը
փարա չէ՛ չահած :

X

Մայրիկս ըստ ինծի օր մը .

— Երուա՛նդ, զաւակս, երբ հայրիկդ
քեզի ծեծէ, մի՛ նեղանար, քեզի շատ սի-
րելէն է :

— Հայրիկս քեզի ալ շատ կը սիրէ՛ :

— Անշուշտ :

— Ուրեմն ինչո՞ւ քեզի չծեծեր :

X

— Օրիորդ՝ քիթը կախելով .

— Մէկ ժամէ ի վեր քով քովի եմք, և
դեռ ինծի չհամբուրեցիր :

— Գիտե՛մ, բայց մէկ ակուս կը ցաւի կոր և եթէ ըսածդ ընելու ըլլամ, բոլորովին սիրտի ցաւի :

— Չեմ հասկնար կոր :

— Սիրելի՛ս, ատամնաբոյժը անուշեղէնները արգելեց ինծի :

×

Կղզիներէն մէկը, պանդոկի մը մէջ :

Ութսուն տարու երիտասարդ մը, անցեալները, իր դեռատի սպասուհիին սիրահարուելով, գիշեր մը, գաղտագողի, անոր սենեակը կը մտնէ՝ առանց առաջուրնէ իր գիշերային այցելութիւնը իմաց տալու հոգն իսկ ստանձնելու :

Սպասուհին, որ կ'երեւի թէ նոյն գիշերը ո՛չ մէկու կը սպասէր, կարծելով թէ իր սենեակը մտնողը գող մըն է, կը սկսի ամբողջ ձայնովը պոռալ :

Դժբաղդաբար, մեր խռփած սիրահարը խուլ ըլլալով՝ աղջկան պոռչոտութենէն շըշուկ մը անգամ չլսեր :

Աղջիկը կը շարունակէ պոռալ, ծերուկը կը շարունակէ չլսել :

Սակայն պանդոկին միւս բնակիչները, որոնք անշուշտ խուլ չէին, կը լսեն սպասուհիին աղաղակները և կը վազեն վեր :

Ծերուկը՝ ինքզինքը այսպէս բռնուած տեսնելով՝ օձիքը ազատելու համար գերագոյն միջոցի մը կը դիմէ :

Աչքերը կը գոցէ և աշտանակը բռնած կը սկսի պաշտօնի՝ երկուցլծով մը :

— Մեծ հայրիկը ութսունէն ետքը գիշերաշրջիկ եղեր է, կը ձայնէ անդիէն ծերուկին չարածճի թոռնորդին :

×

Թաւշանճեան հակալքուական մրցանակը վերջացաւ :

— Ո՛ւֆ, փա՛ռք քեզ Աստուած :

— Սրդեօք քանի՞ հոգի գինովութենէն վաղ անցաւ :

— Ատիկա չեմ գիտեր, բայց սա՛ ստոյգ է որ, գրաշարները ա՛լ հակալքուական յօդաւանդներ չարելէն յոգնեցան :

— Սրդեօք մրցանակը ո՞վ պիտի շահի կ'ըսես :

— Ատոր կասկած կայ, մէյ մը Բիւզանդիոնը և մէյ մըն ալ Մասիսը. մարդիկը վեց ամիսէ ի վեր թերթերին աւքոյով լեցուցին :

×

Օրիորդ Նինի անցեալ օր իր տոտիկներուն 46 թիւ կօշիկներ գնեց :

×

Թէ ինտո՛ր մեր Բողոքական եղբայրները կը գրեն՝ հասկցնելու համար որ . . . մարդուն մէկը մեռած է :

«Պարսկաստանի Նեստորականաց մեջ գործող Էքրիցական Միսիոնարութիւնը ողբալի կորուստ մը ունեցաւ յանձին Տր. Քոկրիցի, ամսոյս 18ին, թողելով իր բազմազբաղ երկրային կեանքը՝ մտաւ Հօրք քաղաւորութեան հանգիստը» :

(Տե՛ս Աւետաբեր)

Տէ՛ր իմ, այս ո՛րչափ բառ, բացատրելու համար ամենապարզ իրողութիւն մը, որուն համար բաւ էր միմիայն . . . բայ մը. — մեռ.ա՛ւ :

Կ'երեւի թէ՝ մեր բողոքական եղբայրներուն մէջ, խիստ բաղադրեալ գործողութիւն մըն է և բողոքական մը մեռնելու համար ստիպուած է անպատճառ «ամսոյն այսինչին թողուլ իւր բազմամեայ երկրային կեանքը մտնելու համար . . . եւլն» :

«Բազում աղմուկ վասն ոչինչի» — պիտի ըսէր անշուշտ ողորմած հոգի Շէյքսպիր . . . եթէ ողջ ըլլար :

Ահա՛ թէ ինչո՛ւ բողոքականները ա՛յնչափ դիւրաւ չեն մեռնիր :

×

Արամ Անտոնեան սիրելի բարեկամս երբ իրիկունները տուն երթայ, բազմոցին երկու անկիւններն ալ գրաւուած կը գտնէ :

Կը տարակուսիք, ո՛ր սկեպտիկներ :

Կարգացէ՛ք ուրեմն անցեալ շաբաթ օրուան Սուրբանդակի խմբագրականը :

×

Խմբագրական gaffeեր . —

Յակոբ Տէր-Յակոբեան սիրելի՛ բարեկամս՝ Մանգուսի Ներքին Լուրերու բաժնին մէջ , Բերա , Վէնէտիկ փողոցի անկիւնը լուծա-
յափոխ Թանաչին անձնասպանութիւնը գը-
րելով , կ'ըսէ .

... Նախաստիճեայ փութացիք եւ ազա-
տեցիք զայն , բայց արդեւ . . . մեռած էր :

Սիրելի՛ Յակոբիկս , քանի որ նախա-
տիները ազատեցին զայն , ուրեմն մեռած
էր , սակայն քանի որ մեռած էր ուրեմն
չազատեցին :

X

Անկուտի երիտասարդ մը աղջկան մը
սիրահարուելով , յետ երկարատեւ գաղտա-
գողի սիրաբանութեանց , վերջապէս կը յա-
ջողի աներ պապային սիրտը չինել :

Ու կը կարգուին :

Օ՛ր երջանկութիւն :

Բայց , քանի մը շաբաթէն , աղջկան
հայրիկը տեսնելով որ իր փեսան տասնոց
մը անգամ չկրնար շահիլ , classique « վեց-
գիւրը կը դնէ անոր , չափազանց իրաւամբ
մտածելով որ ինչո՞ւ իր չճանցած մէկ մար-
դուն թէ կնիկ տայ եւ թէ ուտեստ :

Կը լսեմ թէ էրիկ կնիկ հիմա նորէն ըս-
կսեր են գաղտագողի սիրաբանիլ պղատո-
նապէս :

X

Չեմ կրնար հասկնալ թէ՛ կին մը որ ա-
մենափոքր յաւակնութիւնն իսկ ունի վա-
յելուչ երեւելու , ինտո՞ր կը հանդուրժէ ցե-
խոտ օրերուն կօշիկին վրայէն լաստիկներ
կրել :

Աշխարհիս ամենէն գեղանի կինը , որ
լաստիկներ կը դնէ ոտքերուն , ինծի համար
տա՛սը փարա իսկ չարժեք :

Հապա ցեխերո՞ւն մէջ պտըտին , — պի-
տի ըսէք :

Այո՛ , թո՛ղ ցեխերուն մէջ պտըտին , սա-
կայն , Աստուծու սիրուն , թո՛ղ լաստիկ
չհագնին :

Լաստիկը տգեղ սեռին միայն կը վայլէ ,
ո՞ր իմ թանկագին ընթերցողներս :

• Բարոյախօսը կ'ըսէ .

Ըսէ՛ ինծի որո՞ւն հետ կը տեսնուիս , ը-
սեմ՝ քեզի թէ ի՞նչ տեսակ մարդ ես :

Ըսէ՛ ինծի ի՞նչ կը կարդաս եւ ըսեմ՝ քե-
զի թէ ո՞վ ես :

Ես ալ իմ կարգիս կը փափաքեմ տալ
պատգամ մը ,

Ո՛վ տիկիններ եւ ո՛վ օրիորդներ , ցու-
ցուցէ՛ք ինծի ձեր կօշիկները , եւ պիտի ը-
սեմ ձեզի թէ . . . աղուոր էք թէ տգեղ :

Որովհետեւ , կինը կօշիկը չներկայացնէ ,
բայց , կօշիկը . . . կինը կը ներկայացնէ :

« Մայրիկին նայէ՛ եւ աղջիկը ա՛ն » , —

Կօշիկին նայէ՛ եւ . . . կնիկը ա՛ն , պիտի
աւելցնեմ :

X

Մենք մինչեւ հիմա Բերացի կիներուն
պատիգանման գլխարկներէն դժգոհ էինք :

Ու հիմա այդ գլխարկներուն վրայ ա-
ւելցան նաեւ քանի մը տասնեակ մեղր եր-
կարութիւն ունեցող վուալներ , որոնք կը ու-
նակներէն վար կը կախուին կոր , թռուցիկի
պոչերու պէս :

Առաջները , միմիայն մեծ տուներուն
բառամանները իրենց ետեւէն ասանկ բա-
ներ կը կախէին :

Կ'երեւի թէ սակայն ժամանակակից կի-
ները անոնց բաղդին նախանձեր են :

Կնոջական մեծածաւալ գլխարկները՝
թատրոնի հանդիսատեսները անհանդիսա ը-
նելով կը գոհանային :

Մինչդեռ հիմակուան անվերջանալի վու-
ալները՝ Բերայի մայթերուն բոլոր անցորդ-
ները անհանգիստ կ'ընեն կոր :

Ո՛հ , տիկիններ , գթացէ՛ք մեզի՛ ձեր
խոնարհ ծառաներուն , ընդորս է նաեւ . . .

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Մեր յաջորդ թիւին մէջ յօդուածներ ունին՝

ՕՐ. ՊԷԱԳՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ .

ՏԻԿ. ԲԵՐՈՒՋ ԶԱՏԻԿԵԱՆ .

ԳԷՈԹԻԿ

ԵՐՈՒՍԵԳ ԹՕԼԱՅԵԱՆ .

ՀՐԱՆԴ ՏԱՆՑԻԿԵԱՆ .

ԵՒ

ՄԱՏԱԹԵԱՆՅ

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

Ո՛ւֆ . . . սա երկուշաբթի օրերը, անտա-
նելի է հաւատացէք : Յափրացած քունէ մը
դժուար արթնցող պէպէի մը պէս եմ այսօր,
թոյլ, ծոյլ, առանց կարողութիւնը զգալու
մէջս, աւտին գործերովս զբաղելու հա-
մար : Իմ մասին, իրաւունք պիտի տամ
այն մատաղ դպրոցականներուն որոնք, ար-
ցունքոտ աչքերով կը բաժնուին տունէն
վարժարան հասնելու համար :

Աղջկան մը համար էն անուշ օրը կիրա-
կին է, և է՛ն դժուարը՝ երկուշաբթին :
Կիրակիին ցերեկը շատ անուշ կանցնին և
անոր գիշերը շատ հեշտին :

Որչափ քաղցր է օրուան մը բոլոր տե-
սակցութիւնները վերյուշել գիշերուան մը-
նայլին մէջ, և զբաղիլ անոնց տեսիլքներու-
վը, օրօրուիլ անոնց յուշերովը ոսկեհիւս
պատկերներով :

Բայց հիմա օրը երկուշաբթի, ու ես ան-
կողինիս մէջ Գեկլիթե, կը թուլանամ նոյն
խակ գուպաներս հագնելու, ուր մնաց
առտին պարտականութիւններուս դոր-
ծադրութիւնը :

Մենք աղջիկներս իրաւունք ունինք ա-
տելու երկուշաբթին, քանի որ մեռելներու
օրն է ան, մեռելոցի օրը, ուր քահանաներ
կերթան մօրուք թոթուել սիրելիներու գե-
րեզմաններու վրայ :

Այս տխուր մտածումներուս մէջն էի երբ
դէմս քօնսօլին վրայ ոսկետառ քառք մը
աչքին զարկաւ : Խենդի մը պէս վրան նետ-
ուեցայ և սկսայ կարգալ : Հարսանեկան
հրաւէր մըն էր այդ թուղթը՝ երկուշաբթի
կատարուելիք :

Եւ հիմա կը մտածեմ . . . ինչ անո՛ւշ
երկուշաբթիներ ալ կան . . . :

ԵՐԵՔՇԱՐԹԻ

Ըսին թէ Կիները իրենց սեռին յատուկ
հանդէսի մը հրատարակութեան պիտի սկսին :

Ինչո՞ւ չէ, միթէ մեր սեռը նո՛ւազ կա-
րող է ի գլուխ հանել գրական այդ անուշ
ձեռնարկը :

Յուժ տխրեցայ չիտակը ըսելով, երբ

մտաբերեցի իմ նախամայրս Եւան, որ մի-
նակը չեր և ունէր Ադամը իբր ընկեր :

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ

Այսօր նորէն մօտիսթի պէտք ունիմ, բան
մը որ կը ճաթեցնէ գանկս :

Օրիորդ մ'ըլլալ, ճարտար մատներ ու-
նենալ, կար գիտնալ և . . . մօտիսթի կա-
րօտը քաշել . . . c'est trop fort !

Հաւատացէք եթէ օր մը մայր ըլլալու
բաղդը ունենամ, որ ըսել է վիճակահանու-
թեան gros lotն չահիլ, այն ատեն առաջին
գործս պիտի ըլլայ հոգեհատորիս արհեստ մը
ուսուցանել և հոգեհատորուհիիս կար :

Մատներով ստակ տուր ո՛ր և է կերպասի
մը և ափերով վճարէ մօտիսթներու . . .
ա՛ս աս քաշուելիք բան չէ :

Եւ եթէ չեմ սխալիր, այսօր բոլոր ա-
մուրի քոյրերուս տան պահապան ըլլալնուն
միակ և միմիակ պատճառը ձե կար չը գիտ-
նալինն է, որով ամուսնացու երիտասարդ-
ներ չեն համարձակիր այսօր կապուիլ, վախ-
նալով բացառիկ ծախքերէն :

Հազար ներողութիւն ազնուունի ընթեր-
ցունիներս, սեռիս անյարմար նիւթերու
վրայ յայտնած կարծիքներուս համար, բայց
ճշմարտութիւնը սեռ չունի, տարիք չունի :

ՀԻՆԳՇԱՐԹԻ

Օր մը ինծի հարցուցին թէ օրուան հրա-
պարակագիրներուն մէջ զո՞վ կարդալ կը
սիրես :

Արդեն զո՞վ հարցականին հարկ չկար,
քանի որ հրապարակագիր անունը արտա-
սանուած ատեն շալս ուսերուս առած էի :
Բայց քանի որ հարցում մը կ'ուղղուէր ին-
ծի, ուստի կարծիքս պէտք էի յայտնել :

Հակառակ ջերմ ընթերցասէր մը ըլլա-
լուս, կը սիրեմ կարդալ ըսի Տիկին Ասա-
տուրը :

— Գրագէտներու մէջ հարցուեցաւ կըր-
կին :

— Տիկին Ասատուրը, պատասխանեցի :

— Հեղինակներո՞ւ մէջ . . . :

— Տիկին Ասատուրը, չեշտեցի նորէն :

Վերջապէս օրուան երկսեռ գրողներու
մէջ հարցուեցաւ ինծի :

— Տիկին Ասատուրը, ըսի ծանրանալով
պատասխանիս վրայ : Տիկին Ասատուրը կը

սիրէի կարգալ, կը սիրեմ կարգալ ու միշտ պիտի սիրեմ կարգալ, բայց կ'աղաչեմ խնայեցէք իր անունը և գրուածքները յիշելու յիշերու հետ, որովհետեւ զինքը այդ նիւթին մէջ տեսնելս թերեւս մարմարի պէս ամուր գաղափարս աւրէ:

Կուզեմ այդ յարգելի վարդը անջատ պարտէզի մը մէջ տեսնել:

ՈՒՐԱԹ

Բացատրութիւն մը կայ որ ջիղերս կը զրգռէ: — Տկար սեռ: Այս խօսքը մեզ կիներու համար կըսուի և ընդհանրապէս այրերն են որոնք այս անունը կ'ուտան մեզ երբ խնդրը կնոջ վրայ դառնայ:

Տկար: Այո՛, մենք կիներս տկարութիւնը կ'զգանք ըմբռնարտութեան, թիտլարութեան, կառապանութեան և ուրիշ նմանօրինակ գոհնիկ բաներու մէջ, բայց պէտք է խոստովանիլ թէ՛ զօրաւորագոյն ենք, մենք այն ամէն բարին պատակ գործերու հանդէպ, որոնց մէջ առանց տկար կարծուած սեռին օժանդակութեան կեանքը գոյութիւն չպիտի ունենար:

Մենք թէև տկար, բայց մարդը կը ծընինք, և այսօր արարչագործութեան մէջ մարդուն հաւասար ոչ ինչ կայ աշխարհիս վրայ:

Արդ, ինչ համարձակութիւն, ուրանալ անձն իւր գոյութեան աղբիւրը, ինչպէս նաև այն զօրաւորագոյն մեքենան զոր ծընու զձեզ:

ՇԱՐԱԹ

Տխուր, բայց քրքրալի պարագայ մը մէջ կը բերեմ հոս, ոչ թէ գիտցածս բացատրելու, այլ չգիտցածս ուսանելու համար:

Մեր մէջ սովորութիւն եղած է ամէն մահազգի ներքև աւելցնել սա պարբերութիւնը:

Կը խնդրուի ծաղկեպսակ չղրկել

Ինչ ըսել կ'ուզուի արդեօք, խնայողութիւն մը ազգականաց և բարեկամաց քսակին, մեռնողին անկարեւոր մէկը ըլլալը չեղտնել արդեօք . . . :

Բայց, որչափ կրցած եմ կուսել, Հիւանդանոցին նուէր մը տալ պէտք ըլլալը յիշեցնող, գաղտագողի ազդարարութիւն մ'է սա, որուն արդիւնքը՝ ուրախ եմ յայտարարելու թէ բաւական կլորիկ գումար մը կը ձգէ հաստատութեան:

Իսկ կուզեմ հասկնալ թէ, այս գործին մէջ ալ կուսնախօզ մը, անձնական քմահաճոյք մը կայ արդեօք . . . :

Երկիւմարդիկ կը պարծենան թէ փաղաքշանքը չեն սիրեր, կը հարցնեմ հոս հրապարակաւ, եթէ նոյն այդ փոխան ծաղկեպսակի տրուած նուիրատուներու անունները ունեւոր մը անցնէին թերթերու մէջ . . . :

— Հրամանեցէք . . . :

ԿԻՐԱԿԻ

Demie-saison գլխարկ մը չունենալու համար այսօր դուրս չպիտի կրնամ ելլալ:

ՊԵՍԵՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

Յ. Գ. — Մոռցայ աւելցնելու թէ այսօր խօսք տուած էի այցելել սրտակից բարեկամուհիիս ՆԻՆԻԻՆ, և որուն համար թուրքէթի պէտք չունիմ, այնքան sans façon ենք իրարու հետ:

Նոյն

ՄԵԿՆՈՐԹԵՐՆ

Մարմնական գրգռիչ հրապոյրներուդ, Համար չե՛ր՝ որ քեզ սիրեցի աղւս՛ր, Այլ աչքերդ՝ անհուն եթերին կապոյս Դիւքանքն ունեին վե՛ն ու փառաւոր:

Այդ դիւքանքն եր որ զգլխեց ինձի, Սե՛ր տուաւ հոգւոյս՝ Սե՛ր մ'անցիւքական, Ուր տեղ Սրբութեան կեանք մ'երագեցի, Կեանք մը որ ըլլար միսքի՛, կենսական:

Մարդերու նեղոս նախանձե՛ն հեռո՛ւ Երջանկութեան ծոցն՝ սիրելու համար: Իտեալն է այս կոյս սիրողներու, Իրենց իղձերուն պսակման նեկսար:

Բայց դուն չ'ես զգար, սրբութեան գաղտնիք Անհուն սերերուն՝ որոնք չեն չափուիր: Զի կիներն բոլոր գիտեն քե ունիքն, Տարփանք մը միայն. ո՛չ սե՛ր մ'անբասիր:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՌԵՆԻ

ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒԾԵՐԸ

(Շարունակութիւն)

Յաջորդ օրը իրիկուան մօտ դայի :

Անկողնին մէջ գտայ զինքը նիւար ու դալկահար : Պերճուհին չէր այն՝ այլ անոր մեղրամօմէ անդրին , որ արեւին ճաճանչ-ներուն տակ հալելու մօտ՝ երկնային հրաշքով մը կը շնչէր : Սպիտակափառ ամպերու մէջ ձգուած խորշակահար գամելիաի մը երեւոյթը ունէր ան :

Սենեակին դուռին մէջ քարացած մնացի : Այս հրեշտակայնութեան քայքայումին դէմ մոռցայ ամէն մտածութիւն , լռեց ներսս ամէն զգացում : Ի՞նչ յոյզի մը ազդեցութեան տակ սիրտս բաբախել սկսաւ , ի՞նչ ցաւատանջ խոհանք մը միտքս պարարեց որ՝ աչերս Երկին յառեցի :

Մինչ ես այսպէս անշարժ ու անձայն կը մնայի , ա՛ն , այդ ապրող ու տօգոյն ուր-ուականը՝ անզօր ու դողացող բազումները օդին մէջ տարածած՝ զիս իրեն մօտ կը կանչէր :

— Եկո՛ւր , Աշոտ , մօտեցիր , կը մրմնջէր ան նուաղած ձայնին մէջ հիւանդի չարչըրկող ոյժ մը զննելով :

Թօթափեցի յուշաթափութիւնս և մօտեցայ Պերճուհին : Զեռքէս բռնեց քաշեց ինծի իրեն մօտիկ և ճակտիս համբոյր մը դըրաւ , ճակտիս վրայ ցուրտ սարսուռ մը պտտեցաւ : Յետոյ գլուխը երկարեց ինծի ու ես ալ անոր ճակատը համբուրելու հարկադրուեցայ , չրթունքներս պաղ մարմար մը պագնելու ազդեցութիւնը ունեցան :

Աթոռ մը առի և մահճակալին մօտ նըստեցայ : Հիմա ալ շատ մօտիկէն կը դիտէի զինքը : Գունաթափ , գունաթափ այտեր կղակին փակած , հիւժախտաւորի ամբողջ դալկութիւն մը , թափանցիկ գունատութիւն մը սիրուած էր մաշած , նիւարցած մարմինին՝ ուրկէ քրտինքի ծանր հոտ մը կ'արտաբուրէր , սե , ապրուշուսի նմանող վարսերը վէտվէտուն գահավիթումով մը ուսերէն վար կը խոյանային դարձդարձիկ ու խառնանցիկ : Ասոնց ամէնուն մէջ ի՞նչ որ

ունէր ան հոգեթով՝ խոռոչացած աչերն էին որոնք իրենց անփայլութեան մէջ մեղամաղձոտ հրապոյր մը ունէին : Հաւատք չուների ես . . . Ի՞նչ , ի՞նչ էր մնացած այն երկնափառ դեղանիութեան մարմնացումէն , այն զգլխող հրապոյրի գոյացումէն . . . Հոգի՛ մը , Հոգի մը միայն իր սոսկականութեան մէջ յանկուցող , և տխւղձ ու ազագուն մարմին մը պակուցող . . . : Այն ատեն յանգեցայ սա՛ գաղափին թէ՛ Գեղեցկութիւն կ'անցնի , իսկ մննայուն է մարդուն տգեղութիւնը :

Ենթադրեցի անըմբռնելի և գաղտնալից արտադրութիւններուն մէջ՝ միա՛յն և միա՛յն այս կէտն է յուսահատական և սարսուռազեցիկ : Գարունը միշտ իւր աղուորութիւններովը պիտի գայ , գիշերին վերստին ցորեկը պիտի յաջորդէ , ամպերէն յետոյ նո՛րէն նոյն գեղափայլ արփին պիտի երեւնայ , լուսնակը դարձեալ պիտի տեսնենք իր անփոփոխ զմայլելիութեան մէջ , քարի կտոր մը կրնայ յաւիտեան պահուիլ՝ լայց մարդը և մարդուն մէջ ամէն գեղեցիկ բան կ'անցնի անդառնալի կերպով :

Վաղը պիտի լուսնայ , արեգակը երկնակամարին վրայ պիտի ըլլայ , նո՛յն ծառերը , նո՛յն փողոցները պիտի տեսնես , գիւղիդ եկեղեցին , վարժարանը , տուները ամէ՛նն ալ իրենց սովորական տեղերուն վրայ պիտի գտնես , ամէն բան անցնող օրին յարանման պիտի նշմարես՝ սակայն դո՛ւն փոխուած պիտի ըլլաս , երէկի կեանքդ չը պիտի կարենաս վայելել , դո՛ւն բան մը կորսնցուցած ես անգիւտ կերպով՝ որուն վաղանցիկ վայելքը ո՛չ ճանչցած ես և ո՛չ իսկ կրցած ես զգալ :

Կեանքն է , ապրի՛ւն է աս . այո՛ , հառնո՛ւմը մարդուն , ծիւրումն է անսահման , հիւժումն է անդարման :

Եւ տակաւին խորհիլ թէ մարդը Բնութեան ամէնէն բազդաւոր արարածն է , Ստեղծագործութեան հոյակապ արտադրութիւնն է . . . կը հաւատամ և կ'ընդունիմ մարդը իբրև խորախորհուրդ ստեղծուած և տարապայմանօրէն մտացի և զգայնիկ դժբաղդ , սակայն երբե՛ք երջանիկ ու հոյաշէն գործ : Ի՞նչ կ'արժեն ոյժ մը որ ա՛յնքան չուտ կը

տկարանայ և բարձրաբերձ ու երկնամերձ աշտարակ մը՝ որ հազիւ կառուցուած՝ կ'ըզգեստնի, երանգ մը հրաշալի՝ որ մէկ վայրկեանէն միւսը կը գունատի:

Խիստ ախուր է այս իրականութիւնը և դառնագոյն . . . :

— Խօսէ՛, անցուցած օրերուդ վրայ տեղեկութիւն տո՛ւր ինձի, կ'ըսէր Պերճուհի՝ մինչ ես գլխահակ՝ վշտագին խոհերուն ուկէանի մը վրայ կը տատանէի:

Ի՞նչ պիտի խօսէի, ի՞նչ կրնայի ըսել: Անցուցած օրերս վիշտի և հատնումի օրեր էին. ասո՞նք պիտի պատմէի ու հասկցնէի անոր՝ որ վիշտն ու հատնումն նոյն ի՞նքն էր: Մարդ ի՞նչ կրնայ խօսիլ հիւանդի մը, այս չեմ գիտեր. ցաւակից ըլլալ, այդ ալ ինձի համար չէ:

— Ձը խօսի՛ս, կը պնդէր ան, ի՞նչպէս ես:

Ու ես պատասխանած ըլլալու համար,

— Յղէկ եմ, ըսի:

— Դերասանութեան համար կ'աշխատի՞ս կոր:

— Այո՛, պատասխանեցի:

— Ատո՛ր համար զիս մոռցար, ըսաւ ան տրտմագին չեչտով մը:

Ձը պատասխանեցի: Լռելը՝ հաստատել է:

— Գիտէի արդէն, յարեց ան: Զգացած էի թէ դուն ո՛րքան անդգայ ես. կեղծաւոր ես՝ որով խաբեբայ մը . . .

Ուզեցի բողոքել՝ բայց ան դողդոջուն ձեռքը բերնիս դնելով արգիլեց խօսելէ զիս,

— Ձէ՛, մի՛ պատասխաներ, ըսածիս համոզուած եմ . . . : Ես քեզի՝ չը յանդիմանեցի և ո՛չ ալ արգիլեցի, Աշո՛տ: Եւ արդէն ի՞նչ իրաւունքով կրնայի այդ բանը ընել, բարեկամուհի՛ մը թէ անուանական քոյրի մը իրաւունքով. այո՛, այս անունով կրնայի ընել սակայն բարեբաղդապէս չըրի՝ որովհետեւ կը տարակուսէի քու վրագ և ապահով էի թէ սիրտէդ չէր երբ «քոյր» կը կոչէիր զիս:

Դարձեալ բողոքել ուզեցի՝ բայց ընդմիջելով զիս շարունակեց նոյն դառնութիւնով:

— Քու ընթացքդ հաստատեց տարակոյսս: Ի՞նչ և է. ասոնք ամէնը անցան, այսօր դարձեալ անհամեմատապէս երջանիկ եմ՝

քանի որ քեզի մօտս կը գտնեմ: Աշո՛տ, կեանքը ինձմէ կը խուսափի անա՛, ասիկա կ'ըզգամ, հիմա հազիւ թերեւս մէկ երկու շաբաթ կրնամ ապրիլ . . . այս ժամանակամիջոցը մարդուն համար, մանաւանդ աշխարհը չը վայելած, կուսական երազներուն մէկ հիւլէն իսկ չիրացած ինձի պէս աղջիկի մը համար ակնթարթի մը չափ իսկ տեւողութիւնը չունի . . . սակայն ի՞նչ օգուտ, Աստուածական անդարձ տնօրինութիւնն է աս՝ որուն պիտի հնազանդին ամենէն մեծը ու տկարը՝ բանականին ու անբանին . . . սակայն ասոնք չեն գլխաւոր ըսելիքներս . . . չեմ ուզեր քեզի մահին դառնութիւնովը համակել, չեմ փափաքիր որ զգաս վիշտիս անհունութիւնը կեանքէն բաժնուելու . . . դուն ապրելու ես, կեանքին անուշութիւնս ները ըմբռնելով յափրանալու աստիճան ապրելու ես, որովհետեւ պէտք ես վստահ ըլլալ թէ՛ կեանքէն չը ձանձրացած մեռնիլը միշտ տխուր է ու ցաւագին . . . Աշո՛տ, մեռնիլը մարդուն կարողութեանը մէջ է՝ բայց կեանքէն զգուիլը ո՛չ. այդ ըզձալի գարշանքը՝ Վերէն միայն կրնայ գալ . . . այս մասին մարդը էապէս անասունէն բարձր է . . . մարդը՝ երբ յափրանայ ու խորշի կեանքէն՝ կրնայ մեռնիլ, սակայն առիւծը չը կրնար . . . ասոր վրայ լաւ խորհէ եղբայրս . . . : Հիմա դուն ասպարէզ մըն ես ընտրեր քեզի որով ամէն մարդէ աւելի պիտի ճանչնաս Կեանքը, զգաս վիշտերը և վայելես աղուորութիւնները անոր, աս ճշմարտապէս սիրուն է, Սրուեստդ իրա՛ւ մեծ է. սակայն պէտք է գիտնաս մի և նոյն ատեն թէ ամէն Վսեմութիւն իրեն համեմատ մեծ վիշտեր ու չարչարանքներ կ'ունենայ . . . ասոնք, սիրելի՛ս, զառանցանք չեն, ո՛չ ալ հիւանդ միտքի մը անտրամաբան գաղափարներ:

(Յաջորդ թիւով)

ԱՇՈՏ ՄԱՍԹԵԱՆՑ

Զ Ե Կ Ո Յ Յ

Մեր այն բաժանորդները՝ որոնց հասցէին չըրկած էինք իրենց առ կախ հաշիւները, կը խնդրուի որ հաճին ընդ փոյթ պատասխանել:

ՇՈՒԿԱՅԻ ԷՐԿԱՆ

ՍԱԼՕՆԻ ԿՆԻԿ

— Խնդրեմ Յովակիմ աղա, ննջասեն-
եակը քաշուէիք ոտքերնիդ լուալու համար,
հիմա հոս սալօնը հիւր պիտի ունենանք...

— Հրամանողը թող քաշուի, աս օտային
մէքրուշաթը իմ բարայովս է կընիկ, կը
հասկնաս կոր, բարայովս ըլլալուն կիպի,
ոտքս ալ կը լուամ գլոխս ալ...

— Բայց պատշաճութիւնը յարգել պէտք
է կարծեմ...

— Շատ մի կոտորուիւր տէ քիչ մը պաղ
ջուր բեր, ոտքերս խաշեցաւ, առը մըլար
անկաճիս տակը կէնէ...

* * *

Յովակիմ աղա ըսուած մարդուկը, քիչ
շատ բարեկեցիկ անհատ մըն է, որ ամուս-
նացած է սալօններու անկիւնը օրօրոց ա-
թոռներու վրայ Լա քեռը ու Նաման ու-
սումնասիրող աղջկան մը հետ: Տիկին Սուր-
բիկ համակերպելու համար իր ծնողաց քաբ-
ուխին, կամայ ահամայ պսակուած է օր-
ուան ամուսինին հետ, որ ճշմարտութիւնը
ըսելու համար պէտք է խոստովանիլ թէ՛
կենդանի մեռել մը այսօր: Երեւակայեցէք
տամ տը սալօն մը իր բոլոր նրբութիւննե-
րով, և անոր դէմը կեցուցէք պարզունակ
պօն հօմ մը, որ սալօնին մէջ ոտքերը ջուրը
կը դնէ կոշտերը կտրելու համար...

Մեր մէջ ծնողք երբէք կարեւորութիւն
չեն տար ընոյթին և զարգացման, անոնք,
նախ եանքեանքներու պէս առնելիք փեսա-
նուն գրպանը և քացան կը խուզարկեն, և
եթէ հոն գտնեն իրենց գործին գալիք դը-
րամական կարողութիւնը, բաղնիքի պող-
ջայի մը պէս իրենց աղջիկը — ինչ որ ալ
ըլլայ — գիրկը կը նետեն: Եւ սա ալ ը-
սենք որ, անգամ մը որ պսակի խորհուրդը
կատարուի, ինչ որ ալ ըլլայ ահանջ չեն
կախեր, և իրենց աղջկան արդար դժգո-
հութիւններուն հանդէպ համը ու կոյր կը

ձեւանան, մինչև որ... աղջկանը աչքը
դուրս իյնայ:

Այս և ասոր նման ծուռ որոշումներ և
արարաքներ չեն պակսիր մեր մէջ, որոնց
համար որչափ գրուի, որչափ կրկնուի կուտ
մը չարժեք: Ինչպէս կըսէ Աւետարանը,
«պէտք է մարդ նորէն ծնի հիմնովին փոխ-
ուելու համար»:

Մանկամարդ հարսնուկը ի զուր կը ջա-
նայ կարգի ձեւի դնել իր Եքէնոսէն ալ
կարծր ամուսինը, որ չ'իմանար և չուզեր
համակերպիլ կնոջը խօսքերուն, այլ կը ջա-
րունակէ ջուրին մէջ ոտքերը լուալ, հո'ն
ուր քիչ վերջը հիւրեր պիտի գտնուին:

— Խնդրեմ սիրելի ամուսինս, կաղա-
չեմ... խնայեցէք...

— Կը նայիմ կոր իշտէ, նորէն կոշկոռ
կապեր է վրան, սա ուստուռան բեր...

— Բայց յարգելի ամուսինս, հիմա կը
հասնին հիւրերը եւ...

— Չի հասնին իշալլահ, հիչ զօռովէն
մարդ պէժիւղիւր ընել չէի տեսեր, ինչո՞ւ
առաջուրէն չի հասկցուցիր քի աղան ոտ-
քերը ջուրը պիտի դնէ տէյի...

— Այդ բանը ննջասենեակն ալ կրնայի
ընել, մինչդեռ հո'ս, սալօնը...

— Կընիկ ինծի նայէ քի ըսեմ, աս տու-
նին աղան ես եմ, ես եմ համբեր ան կըռ-
րիկ ոսկիները, իշտէ անոր համար պաշխա-
սիրին գալը վազիֆէս չէ... կը հասկնամ
կոր... կէնէ դուն դէմս անցիր կոտորուէ...

— Ախ... որչափ դժուար է եղեր
անհամեմատ տարբերութիւնը այր և կընոջ
ամուսնական կեանքին մէջ ըսելով, սալօնի
տիկինն իր ա քեռ ուսպ տը չապուին բէշերը
քսքուտելով կերթայ ածելին բերել ամուս-
նոյն, որպէս զի ոտքին կոշտերը կտրէ:

* * *

Հիմա գիշերուան ժամը երեքն է: Դու-
ռը կը զարնուի և չորս հիւրեր կը ներկայա-
նան, ծերուկ կին մը, միջին տարիքոտ

տիկին մը, անոր ամուսինը և երիտասարդ մը, որոնք կը պատուասիրուին սալօնի տիկնոջ կողմէ։ Վերը սալօնին կապերը կը վառին, սակայն Յովակիմ աղան չերեւար։

— Աֆ կընէք քուրուկ, մինք տահա կանուխ պիտի գայինք ամա, Յուսեփիկս ըսաւ քի ալաֆուանկային մէջը իրեքէն առաջ մարդու տուն չերթուիր տէյի . . .

— Թէեւ իրաւունք ունի միւսին, սակայն մեզի համար է տիկին մայր, տունը ձերն է, ուզած ժամանակնիդ կրնաք պատուել մեզ, կը պատասխանէ տիկին Սուրբիկ, աչքը քովընտի դուռը յառած, սպասելով իր ամուսնոյն որ ոտքերը չորցնէ և ներս գայ։

— Շիտակը ըսելով շատոնց է քի պարտքերնիս է գալ, կ'ուզէինք ամա, հասըլ կըլլար պիւր միւսքին սըրայ չէր ըլլար կոր . . .

— Պարտականութիւնն չէ տիկին մայր, ձեր ազնուութիւնն է որ կուզէք, կը փափաքիք վիզիթ հաստատել մեզ հետ, անհուն չնորհակալ ենք այդ առթիւ, ծերուկ մայրը աղջկանը աղաջն ի վար,

— Բա ինծի նայէ Բերսաբէ . . . սալօնի կնիկ կըսեն կոր նէ ածապա, խօրաթային կուստոյին համար է . . .

— Հապա, չես մտիկ ընէր կոր, ըռէմ կը թափէ կոր, չատ խորաթցունել մի տար, կըլլայ քի չենք հասկնար տէ վրանիս կը խնդայ . . .

Նոյն ատեն Յովակիմ աղա կէճէլիկ էն թարին հագած, սիկառ ի բերան ներս կը մտնայ սալօնէն։

— Աֆ կընէք, Միրիճան աղա, հիմա նասըրներս կտրեցի տէ . . .

— Էյ թամամ . . . թէքլիֆ ունինք . . . տէր ողորմեայ . . . սանկ պուճախը անցիր նայինք . . .

Տիկին Սուրբիկ կաս կապուտ կտրած,

— Յովակիմ աղա . . . խնդրեմ, հագուէիք . . . բայց բոլորովին անվայել է ձեր այս նիստ ու կացը . . .

— Բա ճանրմ աղջիկս դուն մէռաք մընէր, մենք ասանկ թէքլիֆսիդ կէօրիւշմիւշ կըլլանք զաթը, հրամանքդ գիտնալս նոր ալըշմիշ կըլլաս կոր տէ կիւճդ կերթայ կոր ամա . . . ըռահաթըդ նայէ . . . խօսք

կ'առնէ ծերուկ հիւրը պուճախէն, մինչ Յովակիմ աղա աչքերը խոշոր խոշոր բացած,

— Ինծի նայէ Սուրբուհի, ես ասանկ եմ, ինծի կուգայ քի ասանկ ըլլալս ալ առաջ ունէ գիտէիր, սա ուր է նշանած վախդս կուգայինէ կէճէլիկս չէի հագնէր, իշտէ հիմա ալթըն կարգուէր լմնցեր եմ նէ հարթայութիւն չէ՞ ըրածդ . . .

— Այո՛, բայց կարծեցի թէ ամուսնութենէս վերջ պիտի կրնայի ձեզի պարտ ու պատշաճը գիտցնել և ըստ այնմ . . .

— Ինծի նայէ Բերսաբ, վազ անցի վրաս լէօպէթ կ'ուգայ կոր, ձմեռուան խույրուխը առի՞ք . . . ան նայինք, չըլտըրթ տըրածագ պու գառը պէնի . . .

Նոյն ատեն տիկին Սուրբիկ դուրս կելլայ սալօնէն։

— Էյ չէ . . . վէրէմ հիլլէթի պանէ ասիկայ Յովակիմ աղա, կըսէ հիւրերէն ծերուկը, կէս սահաթ չեմ կրնար դէմը աննիր տէ ճուղապ տար . . . էյվալլահ սիրտիդ քի կը քաշես կոր . . .

— Բա ճանրմ ի՞նչ խալթ ուտեմ, տսանկ սորվեցուցեր են, աս տահա բան մը չէ, ան պաղի անանկ կը բարակնայ քի էօպիւշիւմը խալթ ուտէ քովը . . .

— Էյ ճանրմ չըսե՞ս քի տիւզ խօրաթէ տէյի . . .

— Էյ թամամ . . . մենք կնիկ առինք չէնէ մի դպրոցի աշկերտ . . . ինտոր կուզէ նէ թող խօրաթէ, ես կէնէ տիւզ պաստիէն չեմ ասնիր . . .

— Էյ չէ . . . վրաս բաբի իմ գործս չէ։

Դիշ վերջը սալօնի տիկինը ներս կը մըտնայ, այս անգամ դէմքը կախ, որուն կը հետեւի սպասուհին աւանդական անուշին թէփսին ձեռքը, մինչ տիկինը գանալէին վրայ ընկողմանած ոտքերը զոյգ մը սնկած վիզէն առ կախ ոսկի շղթային հետ կը խաղայ, առանց անուշը հրամցնելու։

— Էյ վայ մեղքիս, ֆարազա, կելլան տէ, քեասէին խաբախը կը պանան, մէջը դգալ մը կը դնեն տէ, հրամանցէք մը կըսեն . . . կը փափայ ծերուկը աղջկանը, անուշին մօտենալով . . .

— Սուս եղիր մարիկս սուս, տիւզէ աս կնիկը թէրպիյէն խուսուր ունի, ինչ կըսեն նէ ըսեն . . .

— Քա սուրբ նստութեամբ նայէ . . .

— Իշտէ տուտուս նոր մօտայ ինկիլիզ պիշիմի է աս, քաքերնին կը տնկեն եղեր . . .

— Վո՛ւյ . . . տնկուի հէմէն, բօստալը, խաչոր կիտնայինէ չէի իւար . . .

Անուշը կը պտըտի և բոլորը մէկ կը լըւ ուրուտուն . . .

— Սուրբուհի նայէ Միրիսան աղան քիւ առաւ դիտնալս . . .

— Ըստ սալօնի պատշաճութեան ամէն մտրդ աղատ է ուղածին չափ առնելու, և առ այդ ստիպումը բոլորովին անտեղի . . .

— Կնիկ, դուն կիթտիքէ հաւկիթը կը մանաս կոր կըսէ ամուսինը, չըսեմ ըսի ամա, քառասուն պօղումէն դուրս ֆըռլամիշ եղաւ լախըռուն, պէ պապամ մենք ատանկ ուռուովդներ չիտենք . . . նասը ետաճաղ քառը . . .

— Խնդրեմ Յովակիմ աղա, քաղաքավարութեան դէմ ոսնձգութիւններու իրաւունք չեմ տար ձեզի, ես կին ըլլալովս պարտաւոր էք մեղմօրէն վարուիլ հետո . . .

— Էյ պապամ ես ալ պընընը էրիկդ գիտնալովս կուգեմ քի հէօքմ ընեմ վրադ, կը հասկնամ կոր . . .

— Իրաւունքէ բոլորովին կ'իյնաք Յովակիմ աղա, նա մանաւանդ հիւրերու ներկայութեան ձեր բռնած ընթացքը կարի տըգեղ է, ի գիտութիւն ձեզ կըսեմ և կը կրկնեմ . . . Ես իբր սալօնի կին իրաւունք ունիմ ձեր ծուռ գաղափարներուն առջեւ պատուար ըլլալ . . .

— Քա Կիւլիւկ ոտքդ պագնեմ, կիմասնաս կոր, բէք չեմ հասկնար կոր ամա, գիտնալըս էրիկը կառակէ կոր բօստալը . . .

— Սուս եղիր, կէս սահաթ տահա նըստէինք տէ երեսի ճուրով սըվըը դնէինք սըտեղէն, զէրէ աս տնկողը մեղի հետ ալ չաթըշմիշ պիտի ըլլայ . . .

— Բսխեր եմ թէփէն, կայնէ ես հիմա անոր եռվան շինեմ տէ դուն ալ սէյիր ըրէ, ըսիով ծերուկը խօսք կ'առնէ . . .

— Ինծի նայէ աղջիկս, իշտէ ատ չեղաւ, իրաւքի էրիկ կնկան առաւընը բարձ մը պիլէ չի մտնար կըսեն ամա, տարիքիս հէօքմէն քեզի խրատ կուտամ քի էրկանըդ միւթիւ ըլլաս, խօսքէն դուրս չիլլաս, մուհապէթիւ ըլլաք ետվրում . . .

— Ներեցէք տիկին, նախ ըսեմ որ ամուսնական ո'ւ է անհամաձայնութեան և կամ այր և կնոջ գաղափարներու հակառակ շիման առթիւ, ոչ ոք կարող է միջամտութիւն ընել և կամ դիտողութիւն: Ահա այս պիտի խնդրեմ ձեր ազնուութենէն, որպէս զի հաճիք չի կրկնել ձեր այն անտեղի խրատականը զոր համարձակութիւնը ունեցաք, թերեւս առանց անդրադառնալու, ուղղել ինձ հրապարակաւ . . .

— Գիր մը պիլէ չի հասկցայ ըսածէդ ամա, աչքերդ պանալէդ, տուտախներուդ ձերմկնալէն ֆառլին դացի քի, ըսած լախըռունքս պատուրիդ դպաւ: Էրիկդ, Յովակիմ աղան կիրկս մեծցած ըլլալուն, մեղքըյայ տէ երկու չիֆթ լախըռոն ըրի, ինչ եղաւ, խոշաֆին ետըը կարեցաւ . . . , աճապ սա կիզլի սըթմա խույրդ առջուրնէ պէլի ընէիր նէ քեզի ես Յովակիմին նէ հովը կը ցուցնէի նէ ալ կէմը . . . ամա չօգչէյ, սուր սըտեղը իւք միտաֆիրտուն կալերնիս է, ֆարազա տըռըդ տըռիկդ կուլ տուր տէ, մենք երթալուն քէլի, էրկանըդ թէփէն ելիր վազիֆէս չէ . . .

— Տեսէք տիկին մայր, ձեր խօսքերը ինձ տուն կուտան . . .

— Հրամմե՛քս երեք հատ ալ տուն կուտան կոր տէ կէնէ սունոյ չիդայ, ամա Յովակիմ դաւակս քիւմէս մը պիլէ չառաւ ձենէ . . .

— Խնդրեմ թոյլ տուէք պատասխանել ձեր այնքան ջախջախիչ խօսքերուն, որոնց հանդէպ պարտ անձին կը համարիմ ես զիս փաստաբանել . . .

Ու հաղիւ ծերունի ջատուկը կալաչդ բերանը կը լարիւր պատասխանելու, յանկարծ երիտասարդը, որ մինչև այն ատեն լուռ անխօս մտիկ կընէր անցած խօսակցութիւնները, խօսք կ'առնէ . . .

— Տիկին, կը շնորհաւորեմ զձեզ, և կը խնդրեմ որ թոյլադրէք ինձ սեղմել ձեր ձեռքը ինչան անկեղծ համարման . . .

— Շատ շնորհակալ եմ ըսելով երկուքը մէկ սենեակին մէջտեղը իրարու ձեռք կը թոթուեն . . .

— Աստուած թամամին հասցնէ, իրարու խեր տեսնաք, կըսէ ջատուկը կաս կապուտ

կտրած, աս ալ պաշխա թիւուիւ ըռէզիւու-
թիւն մը քի, մէկ մարդուն էրիկը պոյճա
կէճէլիկը հագած նստած ըլլայ տէ, կնիկը
պիր կէօրիւշ պիր պարը տէլիխանլըին հետ
ծառք ծառքի տայ . . . , դուն ալ տըլլայի
պէս նստեր ես Յովակիմ աղա . . .

— Կեցիր նայինք տահա տէրտէրը հայր-
մերը չի պաշխայեց . . . ան վախտը ծանս
պիտի հանեմ, աս ծառք թոթուելը ալա-
ֆըռանկայ է, սալօնի ճիւղէ է . . .

Տիկին Սուրբիկ դուրս կելլայ սենեակէն
ալ չի դառնալու մտօք, ասով հետք մը
ըրած ըլլալու համար իր պըտորձի հիւրե-
րուն, որոնք խոտոր կը համեմատէին իր
սալօնի տիկնոջ քառաքրեոյին :

— Ծօ՛, շան լակոտ, կը վայլե՞ր ըրածդ,
էլին կնկանը հետ սուֆային օտթան ելլալ
ծա՛ռք թոթուել . . . թէքէս ի վար ինչաւ,
պէրէքեաթ վէրսին Յովակիմ աղան անտեղ-
ուանքը չէ տէ պալըխի պէս ծանը ծունը չի
հանեց . . .

— Ներեցէք որ ըսեմ մեծ մայրիկ, աս
տիկինը սալօնի տիկին է, ձեր դաղափար-
ներուն թէե հակառակ, սակայն պէտք է
ըսեմ որ չի գտնուած և փնտուած առա-
ւելութիւններ ունի, դորս կը ցաւիմ ըսել
թէ շատ քիչերը կը հասկնան :

— Սուս ծօ՛ Լեւոնիկ . . . ինչո՞ւ պէտք
կըսէ հայրը անդիէն, ալօքաթութեան տե-
ղը չիգայ . . .

— Ատանկ ըսելուդ, ըսէքի, Յովակիմ
աղան անտեղուանքը չէ եօխայ, չէնէ աս
ծառք թոթուելէն, ըռաքութալը սոյէն խը
կեկար, քա ինչ միմասիպէթ ունի քի էլին
նոր առած կնկանը ելլայ տէ ծառքը թոթ-
ուէ, սուռաթը շտկէ տէ դէմ դիմաց սուս-
տա խաղան . . .

— Ներեցէք, տիկին մեծ մայր, հաւա-
տացէք, եթէ նմանօրինակ աղջկան մը հան-
դիպիմ, կամ բաղդը ժպտի . . .

— Տէ՛ . . . ծանդ քեզ քաշէ . . . ես
մեռնիմ նէ կուզէք նէ թէատուէն աղջիկ
առէք . . . աս ըռէզիւութիւնը տէյմէսին
չը կըլէր . . .

— Քա ճանրմ Յովակիմ աղա, աճապ
ի՞նչ ըսիր տէ աս կնիկը պերիր տունիդ օս-
թալըխ տեղը տնկեցիր . . .

— Քա նէ պիլէյիմ . . . սալօն ֆիւան
պիտի շտկէինք նէ, ըսին քի, մութխա
սալօնի կնիկ մը պէտք է, վայլումը անանկ
է տէյի . . .

— Էյ աղջիկ եա . . . կնիկ ըսածդ, սախ-
սօնեա՞յ է քի սալօնիդ վայլումը քնտուցիր,
սուրը սըտեղը հասկուցուր նայիմ . . .

— Քա ճանրմ, նշանած վախթիւս ալ
ասանկ գրաբառնա, ալաֆռանկայ խալթեր
կուտեր նէ, կըսէի քի դահէր քիպարու-
թիւն կընէ կոր, կարգուինք նէ ան ալ ին-
ծի պէս կէճէլիկէնմիշ կըլլայ տէյի, օ՛ իսէ . . .

— Քա դուն չիյտես քի կնիկ խըսմին
խառամանի խոյին է, ետքը կելլայ օյինը
տէյի, դուն վարժուհի առիր չէնէ կնիկ . . .

— Ծօ՛ հագգըն վար տուտու, ամա ի՞նչ
ֆայտա, նամուսիս համար ես ալ պիտի
պաշխայեմ ույմիշ ըլլալ . . . նէ խալթ եէ-
մէլի . . .

— Բաղդ ըսածըդ այսպէս կոյր է, տե-
սէք կը դանգատիք այն տեսակ վարդի հա-
մար, դոր մարդ չի խմըլիր հոտոտել ան-
գամ . . .

— Ծօ ի՞նչ խալթ կուտես կոր, հիմա
Յովակիմ աղան ի՞նչ միտքի կերթայ, ծօ
խելքիդ եկաւ, հէրիք մէթ ընես մաթահը . . .
սա նայէ, թէփէնիդ բսխեմ, պիչիմի ձգեց
դուրս ելաւ . . .

— Այդ ալ քաղաքավարական և կամ
սալօնի կնկան ձե մըն է, փոխանակ հոս
ձեզի հետ խօսքի բռնուելու, յարմար դա-
տեց զձեզ միմակ թողուլ . . .

— Ինծի նայէ օղլում, խօսք կ'առնէ Յո-
վակիմ աղան, սենեկին մէջտեղը յառաջա-
նալով, դուն իմ աս կնիկս առաջուրնէ կը
ճանչնայիմ . . .

— Ո՛չ . . . պէտք է ըսել թէ առաջին
անգամ է որ կը տեսնամ հոս . . .

— Օղլում ես թիւճճար եմ ամա, տա-
հա բիացան պօնօ հանած չունիմ, ֆախաթ
խալթիդ չի մնայ տէյի կուզես նէ կնկանըս
կուտակը իմզա մը ընեմ տէ քեզի ճօ ընեմ . . .

— Օ՛ . . . քաւ լիցի . . . միթէ կարելի՞ է . . .

— Կաւ լիցի, արինա լիցի, ինչ որ է ան
լիցի, ֆախաթ քեզի սըխըտարը ըսեմ քի,
անտնկ էրիկ կնկան խօրաթաներու չար չա-
բուխ ցիւս չի նետես, չիւնքիւ տակէն չա-
բան օղլու կելլայ օղլում . . .

— Բայց ես հաստատել ուզեցի որ տի-
կինը բուն սալօնի կին մըն է . . .

— Իշտէ տեսա՞ր եա, սալօնի կնկան
չուկացի էրիկ . . . , ես առի բիւլման ե-
ղայ, չեկաք դուք ալ էրիք . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԳԱՒԱՌԻ ՆՇԱՆՏՈՒՔԸ

Գաւառացի երկտասարդը հազիւ 20 տարուան թեւակոխած նշանուելու հովեր կառնէ, ու ասոր հետեւանքը կ'ըլլայ բանի գործի չինայիլը, այնպէս որ ինչ գործ հրամայուի իրեն, ո'չ պատասխանը միշտ պատրաստ է բերին մէջ: Բանի մը շարքի այս ընթացքը շարունակելէն, ծնողքը կը հասկնան գործին էութիւնը, և անդին ասդին կիյնան հարսնացու մը գտնալու: Երկտասարդին համար տարբերութիւն չընէր, միայն թէ իր ծնողքը ընտրած ըլլան նշանցու աղջիկը, բաւ է որ աղջիկը, բոկոսն տեսնուած ըլլայ տղուն՝ աղբիւրի մը և կամ դռան առջև, սատանան վկայ, որ նոյն վայրկեանին լմնցած է սակարկութիւնը, ու յաջորդ շարքի ծնողքը աղջկան տունը կ'երթայ:

Փողոցին մէջ որու որ հանդիպին, գոնէ քառորդ ժամ խորհուրդ կը հարցնեն դէմինին և քանի մը ժամ վերջը կը հասնին օրիորդին տունը՝ որ կարծես երազէ մը արթնցողի պէս կը սկսի սէտիները, վարագոյնները և գետնի գորգերը շտկել: Մինչ ինք այս գործողութեամբ կզբաղի, անդին մայրը եկող հիւրերուն հետ անվերջ խօսուածքի մը բռնուած է:

Խնամիները հիմա բազմած են ի վերայ սէտիի, այնպիսի ձեւով մը որ՝ գլուխին վար ոտքերին վեր, անձուռնի նստուածք մը: Մէջերէն մէկը կը սկսի երկու կողմը խօսքեր ցանցնել: Ուրիշ բան չէ այլ եթէ ոչ աղջկան մօրը լսեցունել թէ՛ իր աղջիկը իբր հարսնացու կ'ուզեն իրենց որդւոյն: Սակայն ասկէ յառաջ կսկսին տղուն բարեմասնութիւնները գովել գովաբանել:

— Ծէյլանի պէս պոյ ունի . . . հէլէ մէյմէկ պիլէկներ ունի օր երեսն տէ քսան տէլիխանլըյի մէջ խառնես կը զատվի: Հէլէ հէլէ ծիու մը հէզնէ տէ գալլիքէն տեսնէս: Մինչև որ աղջկան մայրը «Ասուազ պաշխէ, մարը ինծի հըմար մէծցուցած կըլլայ, գաթը ինչ պըտոր ըլլայ քա, հէրքէս ալ էրկիր հըմար աղջիկ մեծցունէ կոր սանքիմ, ահա մեծցուցի վաղը պիտի էլլա էրթայ»:

Ասոր վրայ սակարկութիւնն ալ լմնցած է ըսել է: Ուստի մեր խնամուհիները «աղ-

ջիկ էկօ ձերվէնիս պագ» ըսելու կը սկսին: Սուրճ մը խմելէ վերջ կը բաժնուին տուն, խնամիին և հարսնացուին վրայով դիտողութիւններ ընել:

Մէկալ շարքի տղուն հայրը, և մի քանի աղագականներ, հաւաքուելով աղջկան տունը կերթան, ուր աղջկան հայրը նոյնպէս աղագականները նստած են պատգամ մը ընդունելու պէս, նորեկները իրենց վայելուչ տեղը նստելէ վերջ տղուն հայրը կը սկսի աղջկան հօրը՝ «Աստուծոյ հրամանով, ձեր օրիորդը մեր պարունին խնդրելու եկանք», ըսելու: — Պարի եկաք հազար պարի ամա՛, ո՛ւմ աղջիկը կուզէք. տահա մէրինը պզտիկ է, հէմ տէ ատէնի պաներուն էս չեմ խօրնիվիր իծմէ մէջ տատա ունի, հօքար ունի, չիտէմ:

— Հաճը աղա դուն ինչ կասես տա պանին . . . — Ինչ ըսեմ հէլէ վախիթը իբրիլէմիշ արէք: — Հէլէ հաճը տայը ապպէս պաներ մի խօրաթեր . . . տէ ինձ պտոր ըլլայ նէ սահաթ մը էրաջ թող ըլլայ: Հէլէ էկօ նայինք հաճախ լախըրտը մալ դուն խարնէ հոտտիկ ինչ կայնէք էս:

— Էս ինչ ըսեմ Ասուած կրեցնէ . . . ինչ կայնամ ըսել . . .

— Էյ ճանրմ մի էղիյէթ տաք սա մարգոյ, հէրիֆները մեղի հէօրմէթի կըտնուեցան, Աստուած խայրըլը ընէ ըսէք թող լմնայ: Ասոր վրայ ամէն կողմէ այս բարբառը լսելի կըլլայ «Աստուած խայրըլը ընէ»:

Ծիշդ այս միջոցին է որ հարսնացու աղջիկը ի տես կուգայ ապստով մը որ վրան դրուած կըլլայ գաւաթով չըռք, անուշները խմուելէն վերջ կողմնակիցները իրարու նշաններ կուտան, մատնի, Ս. գիրք և կամ մետաքսեայ թաշկինակ և ասանկով ժողովը կը վերջանայ:

Նշանուած պարոնը այդ օրէն իսկ կը սկսի իւր տեսութիւններուն:

Ինչպէ՞ս, Պօլսեցիք մեր գաւառի նշանուածները ձերինէն լաւ չե՞ն միթէ:

ՀՐԱՆԴ ՍԷՎՏԱՆԱՆ



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Մագրի-գիւղէն մեզ կը գրեն թէ՝
Ձեթինի տան մը մէջ սարքուած ըն-
տանեկան սեղանի մը առթիւ, ոմն ոք
բաքոր լաւ մը խնկարկելէ վերջ այն-
քան ինքզինքը կորսնցուցեր է որ, ա-
ռաքելական կոչումն քէն զրկուելով բազ-
մացին անկիւնը սրգափիւն տուեր է :

— Սկիւտարէն մեզ լուր կուտան
թէ՝ զոյգ մը նշանածներ անցեալ կի-
լակի Լեօնիսաւի մոթինէն վայելելու
համար Բերա երթալով վերջին շոգե-
նուր փախցուցեր են, ասդին ողջկանը
մայրն ալ բնականաբար իր . . . խելքը :

— Նորէն Սկիւտարէ կիմանանք թէ,
կիրակի երեկոյին ան կռան քուայթ
Ձիֆթիկի պարտէզը գիմու ընտանիք
մը, չի թռչելու համար հետեւին ա-
ռած աղապային հովանոյը կորսնցուցեր
են :

— Իբր նորոյթ կիմանանք թէ մեր
ինտէլիքենտ երիտասարդներէն ոմանք
փոխան սիկաուի, քթախոտ սկսած են
քաշել : Կը ինդրուի մասնաւորապէս
զգուշանալ հեփշտէն, մանաւանդ թէթ-
աէթի միջոցին :

— Այսօր իսկ խմբագրութիւնս ըս-
տացաւ հետեւեալ նամակը :

«Ձեր բաժնեգինը 1/2 Օսմ. ոսկի պատ-
րաստած էինք, բայց Ձեր հասցէն չը
գիտնալնու չի կրցանք բօստային յանձ-
նել » . . . :

Ու պէտք է ըսել թէ այս տողերը
կրող նամակը ուղղակի մեր ձեռքը հա-
սաւ իր կատարեալ հասցէին չնորհիւ :

— Օգերուն անմիջական ցրաւ-
թեան և տեղատարաւ անձրեւներու
երեսէն այն կարգ մը նշանածները, ո-

րոնք ձմրան լասթիկ կամ կարշ և կամ
հովանոյ չունենալուն՝ հաւանականա-
բար (.) տունը մնացին :

— Բերայէն մեզ կը տեղեկացնեն
թէ՝ ներկայ ամսոյս սկիզբէն ի վեր դըպ-
րոյներու վերաբացումին առթիւ Էքքա-
լօժօսի նարտերը կատարեալ հանգիստ
կը վայելէն :

— Կիմանանք թէ՝ Ալէմ-տաղի սար-
կաւագութիւն ընող օլտուխճա ես գի-
տեմճի միւսիւ մը, ձմեռնամաւտի ներ-
կայ եղանակին սե քուսվոթ կապել
սկսած է, քանի որ օգափոխմանէն
ոչ ոք մնացած է հոգ և ինք չպիտի
կրնայ քէյքսի ադամանդներուն պէս
փափուլի :

— Եւրոպական թերթի մը մէջ կը
կարդանք թէ, բարեկեցիկ տուներու
մէջ կին սպասուհիներու տեղ այդ սպա-
սաւորներ գործածել որոշուած է : Այս
հաշուով, եթէ մեր հայ տուններու մէջ
ալ փորձենք, կիրակոս աղբարներ կամ
Տարաւիչներ պիտի կրնան արձակ հա-
մարձակ մատուովն սննեակը մտնել և
հրամցնել անոր գուլպաները և ժառը-
թիէռները : Ի՞նչ կարծիք ունին արդ-
եօք ամուսինները :

— Տակաւ երկարող գիշերներու
ժամանցը կաշմող սկամպիլը Սկիւտարի,
Գում-գարուի և Սամաթիոյ ընտանե-
կան շրջանակներու մէջ վերսկսուած ըլ-
լալը լուրը կուտայ մեր մասնաւոր թըղ-
թակիցը :

Արտօգրուէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՂԱՆ ԳՐԱՏԱՆ

Պատ-Ալի Լուսսէսի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԼՈՒԹՅԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
դուստներու, կանանց քէյքոնիներու և
տղայոց շէք և գիմացկուն փոքրիկներու
հոխ միթերք մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրը է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին.

50—4

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, մուկ-
ները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ.

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ.

Տեղոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց գիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րայ առնել ամէն գործ, թէ ներկն և
թէ գործաւորոյցիք մէջն ըլլալով.

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պագըր-
ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան. — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
գիւրամատչելի պայմաններով.

20—20

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանֆ

ՖԷՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
ՖԷՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ:
ՖԷՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգեհաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեանս դրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեքանաք Խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ԵՒ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻԼՏ ԹԷՅԵՐ



Կ. Պոլիս, Պանդեֆափու, Ճելալ-Պեյ խան, քիւ 10

ՀԷՐՃԱՅԻ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Գահարեղէններու իր մասնաւոր վաճառուէն զատ, այս անդամ քաջալերուած իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն, կը փութայ յայտարարել թէ՝

Զմրան յառուկ վերջին նորաձեւութեան վրայ՝ պատրաստ ունի ամէն տեսակ հագուստներ, արանց, կանանց և տղայոց համար, անտակեղէններ, ժամացոյցներ, շրթայներ, ինչպէս նաեւ զորգեր, մուշամաներ, պիսիֆէթներ, կռամօժօններ է՝ն վերջին կատարելութիւններով:

Միմիայն գնուած ապրանքին 20 % ը կանխիկ ըլլալու պայմանաւ, իսկ մնացեալ գումարին 5 % շաբաթական վճարումով պատրաստ է հայթայթել:

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ ընդ միշտ պատրաստ են:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է որ չհաճ է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը, իր ապրանքներու ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՆ և ՈՍԿԵՆԵՐՈՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ, ԱԶՆՈՒՆՈՒԹԵԱՆ և ԱԺԱՆՈՒԹԵԱՆ մասին և նոյն իսկ՝

Ա Պ Ա Ռ Ի Կ

Անդամ մը այցելելը բաւական է, համոզուելու համար թէ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր էն դժուարահաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու 5 % զեղչ:

30-1

ՍԱԿԱՐԿՈՒԹԻԻՆ ԶԻԿԱՅ